

Այն յօդուածը կարգացուած է Մայր Աթոռոյս Վերդեան Ճեմարանի աշակերտաց գրականական ժողովում :

Ն Ա Մ Ա Վ Շ ՈՒ Շ ՈՒ Ց :

Անդադար կրէք մեզանում՝ այսպիսի խտրեր :

—Մեր ժողովուրդը ընթերցասէր չէ, պէտք է աշխատել ընթերցասիրութիւն տարածել . . .

Աամ՝ ասում են՝

Մեր ժողովուրդը ընթերցասէր է, բայց տպած թուղթը գնելու համար ժշտ է, պէտք է աշխատել վարժեցնել ժողովրդին գիրք գնելու:— Ըրա-
գիր ստանալու . . .

Մենք ասում ենք՝ երբ գրականութիւնը բարոյապէս և նիւթապէս ժողովրդի կենտական բարօրութեան և շահերի հետ սերտ կապ կունենայ:— այն ժամանակ գրականութիւնը ժողովրդի համար պահանջ կը դառնայ ու ընթերցասիրութիւնը և տպած թղթի վաճառումը կատարեալ կերպով տեղի կունենան :

Մեզանում ժողովուրդը իսկապէս կատարեալ նիւթական — նիւթա-
պաշտ է, նա մտաւորական, բարոյական կեանքով շիտալում, տեսէր մեզա-
նում՝ զրքեր տպում է և գնում նոյն ինքն երիտասարդութիւնը, ժողո-
վուրդը ոչինչ մաս չունի գրանում, նա չէ կարդում, և եթէ տնում է
գիրք կամ ըրագիր, այդ խաթրի համար, կամ ինչպէս ասում են ոգորմու-
թիւն տալու համար է, այդպէս է մասսան :

Այդ այդպէս լինելով, բնական էր որ ազգի բարեմիտները կաշխատէին
հարստացնել գրականութիւնը և տարածել ընթերցասիրութիւնը, դրա
համար տաճկահայերը սկսեցին ոչ թէ տալ վիպասանական գրուածքներին,
ինչպէս գրաւիչ միջոցի և համապատասխան ժողովրդի թղթ կողմին . . .
իրաւ գրանով նրանք ընթերցասիրութեանը զարկ տուին, բայց ընթերցողը
ընկաւ դառածմանց մէջ, իրական կեանքի ճանապարհից դուրս եկաւ և
դաւ երեւոյթական և թեթեւամիտ . . .

Ուստիայերը աւելի լուրջ շարժուեցան այդ խնդրում, մեզանում կազ-
մուեց մի ընկերութիւն, որ հրատարակում է ճիշտ մեր պահանջին համե-
մատ զրքեր: Սա հասկացաւ, որ ժողովուրդը ընթերցասէր դարձնելու հա-
մար հարկաւ որ է մատաղ սերունդից սկսել, ուստի և հրատարակեց ըն-
տիր մանկական ընթերցանութեան զրքեր, զրքեր՝ որոնք երեխային կը
դարձնեն խոհուն և կը ձգեն նրա մէջ բարոյական և առարկնական սեր-
մեր, մի և նոյն ժամանակ հիմնաւորելով նրա մէջ ընթերցանութեան սեր:

Մասին — ժողովրդին ընթերցասիրութեան վարժեցնելու համար նա
հրատարակեց նրա «նիւթական» կեանքին վերաբերեալ անտեսական զրք-
եր: . . .

Պարզ է, որ ռուսահայերը բարեյարմար և ուղիղ ճանապարհով են գիմում նպատակին և յոյս կայ, որ զրանց ազգեցութեամբ տաճկահայերը կը գտնան իրենց յոռի ընթացքից։

Ռուսահայերում կազմուած ընկերութիւնը, որ յիշեցինք՝ է Թիփլիզի ընկերութիւնը հայերէն գրքերի հրատարակութեան, որի մասին միայն այս նկատողութիւնը կանենք այստեղ, որ նրա հրատարակած մանկական գրքերը թէ և շատ գեղեցիկ և մաքուր, բայց և չոտյլ են և ազնուապետական տոն են կրում, որով գրքերի գները շատ սուղ են և անմատչելի ժողովրդի մեծամասնութեան մանուկներին. այդ գրքերը իրենց սղութեամբ շատ չեն ծախուում, լու գրքեր ունենալ, բայց չը տարածուած ժողովրդի մէջ — միևնոյն է թէ չունեալ եթէ ընկերութիւնը իւր միջոցներով կը տպի և կը ցրուէ ձրի, զրանով նա փնաս բերած կը լինի ազգին, վասն զի պէտք է ժողովրդին վարժեցնել «թղթի» համար փող տալ։

Յոյս կայ որ ապագայում ընկերութիւնը այդ հանգամանքի վրա ուշադրութիւն կը դարձնէ, Թիփլիզի՝ ինչպէս կենդրոնի՝ արած ամեն մի յառաջադիմական քայլին՝ պէտքէ գաւառական բաղաբը արձագանք տայ։

Ես կազմում եմ Շուշում — հրատարակչական գրասենեակ, և առաջին կարգը իմ հրատարակութիւններին՝ կը լինին հետեւեալ վեց գրքոյնները՝

Մանկանց համար «Երկու Մանրավէպ» Ալֆօնս — դոէից թարգմանած. (գինն է 15 կոպ.)։ Շնորհների և դաստիարակների համար «Պօղոսեան ուսուցչի օրագրից» հեղ. Լեոպօսի, թարգմանած «Вѣсникъ Европы» ամսագրից. (գինն է 20 կոպ.)։ Ժողովրդի համար «Ժողիկ և ծաղկահատութիւն» (գինն է 15 կոպ.)։ Նոյնպէս հետեւեալ ընթերցանութեան գրքոյնները. «Ճանապարհորդութիւն զարարաղում» (գինն է 50 կոպ.) «պարապ ժամեր» (գինն է 25 կոպ.) և «Քնար խօսնակ» ինքնուրոյն և թարգմանական բանաստեղծութիւններ (գինն է 50 կոպ.)։ Մեր արած գրքերի ընտրութեան մասին թող գտնեն ուրիշները՝ նրանց լոյս տեսնելուց յետոյ։

— Եւ յդ գրքերը յանձնուած են տպագրութեան և մի ամսուայ ընթացքում բոլորը պատրաստ կը լինին։

Իմ հրատարակութիւններիս երկրորդ կարգի համար ընդունում եմ գրքեր, որոնք պիտի լինին մէկից մինչև հինգ տպագրական թերթ առ այժմ ցանկացողները թող գիմեն իրենց պայմաններով. չըդունուած գրքերը յետ են զրկում տիրոջ ծախսովը, (իմ հասցէն. Тиграну Назарянцъ Въ Шуму)։ Յոյս ունիմ, որ այն անձինք, որոնց գիմել եմ բաժանորդագրութեամբ ցրուել իմ գրքերը՝ կաշխատեն սրտով, ես գիմել եմ բաժանորդագրութեան գրքերը տարածելու համար և ոչ տպագրութեան ծախքը հայրմայրելու համար։